

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն ընդունել է «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի տնօրենին և ծրագրերի ղեկավարին

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն ընդունել է «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի տնօրեն Նունե Եղիազարյանին և ծրագրերի ղեկավար Վարվարա Քալաշյանին:

ՀԱՆ Հայաստանյան գրասենյակի տնօրեն Նունե Եղիազարյանը ներկայացրել է հիմնադրամի գործունեությունը և Արագածոտնի մարզում «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակներում մարզի 4 դպրոցներում աշակերտների ակնային առողջության պահպանման ծրագիրը:

Քննարկվել է ՀՀ կրթության և գիտության և ՀՀ առողջապահության նախարարությունների հետ համագործակցության արդյունքում ստեղծված «Ավետիս» երեխաների առողջության խնամքի հարթակի ներդրման հարցը:

Փետրվարի 4-ից հանրապետության բարձրակարգ մասնագետների կողմից Թալինի թիվ 1, Ոսկեթաս, Շղարշիկ և Աղծք համայնքների միջնակարգ դպրոցներում ժամանակակից սարքավորմներով կիրականացվի դպրոցականների ակնային զննում: Նախնական օրոգիչների արդյունքները կպահպանվեն էլեկտրոնային եղանակով՝ հետագայում ծնողների կողմից երեխայի առողջությանը հետևելու նպատակով: Առավել խորացված խնդիրներ ունեցող երեխաները կուղեգրվեն ակնաբուժական կենտրոններ, որտեղ կստանան անվճար հետազոտություն և բուժում:

- Շատ են կարևորում նման նախաձեռնությունները, հատկապես երբ դրանք վերաբերում են առողջապահական ծրագրերին: Առողջապահության ոլորտում խնդիրները բազմազան են՝ տարիներ շարունակ իրականացված պետական քաղաքականությունից սկսած մինչև առողջության նկատմամբ անհետևողական վերաբերմունք: Հիվանդները հաճախ բուժօգնության են դիմում հիվանդության սրման փուլում կամ ուշացած: Սակայն, ինչպես

բազմիցս նշել եմ, մեր խնդիրը ոչ թե անցյալի բացթողումները քննարկելն է, այլ առաջ շարժվելը՝ ռեսուրսների արդյունավետ կառավարման և յուրաքանչյուրիս նվիրված աշխատանքի շնորհիվ առավել արդյունքներ գրանցելը: Հարկ եմ համարում ընդգծել, որ ոլորտի գերատեսչություններն այժմ աշխատում են օպերատիվ ռեժիմով, արդեն իսկ առկա են շոշափելի արդյունքներ: Մարզպետարանի հնարավորությունների և լիազորությունների շրջանակներում պատրաստ եմ համագործակցել, ամեն կերպ աջակցել նման նախաձեռնությունների իրականացմանը,- ասաց մարզպետ Դավիթ Գևորգյանը: